

Ընտանիքի գնահատումը ճգնաժամային միջամտության ժամանակ

Ճգնաժամային միջամտության ժամանակ ընտանիքը գնահատելիս անհրաժեշտ է ներգրավել ընտանիքի բոլոր անդամներին թե՛ առանձին-առանձին, թե՛ որպես խումբ: Գնահատումը անդրադառնում է նաև ընտանիքի պայմաններին, նաև անդամների փոխհարաբերություններին, նաև ճգնաժամի էությանն ու դրան նախորդող գործոններին և այլն:

Կարևոր է, որ մասնագետները գնահատման գործընթացին մոտենան առանց նախատրամադրվածության ու դիրքորոշումների, հնարավորինս անկողմնակալ, բաց լսելու ու տեսնելու այն, ինչ կա: Անհրաժեշտ է հասկանալ ընտանիքի յուրաքանչյուր անդամի ընկալումը այս կամ այն հարցի շուրջ:

Ստորև ներկայացվում են այն հիմնական ոլորտները, որոնց անհրաժեշտ է անդրադառնալ ընտանիքի գնահատման ժամանակ:

1 Ընտանիքի կազմ (ո՞վ վեր են ապրում ընտանիքում) - Սնուն, ազգանուն - Տարիք / ծննդյան ամսաթիվ - Սեռ - Կրթություն - Աշխատանք / Զբաղվածություն / Ուսում	3 Ընտանիքի հոգեբանական մթնոլորտը - Փոխհարաբերությունների բնույթ ընտանիքի անդամների միջև - Դերերի բաշխում: Հիերարխիա - Հուզական մտերմության մակարդակ - Ընտանեկան կանոններ, նորմեր, առաջնահերթություններ, ավանդույթներ, արժեքներ - Հաղորդակցման և վարքային մոդելներ, պատերներ - Ծնողավարման մոտեցումներ
2 Գնահատման ընտանիքի աչքերով - Ի՞նչ է տեղի ունեցել: Ինչպե՞ս է ընտանիքն ընկալում իրավիճակը - Ե՞րբ և ինչպե՞ս առաջացավ ճգնաժամը (իրադարձությունների շղթան, որը հանգեցրել է ճգնաժամի առաջացմանը) - Ի՞նչ հրահրող ու ճգնաժամի սրմանը նպաստող հանգամանքներ կային - Ինչպե՞ս է ընտանիքը փորձել հաղթահարել ճգնաժամը և այլն	4 Ընտանիքի կյանքում հատուկ դեպքեր - Կորուստ - Տեղահանություն - Անհայտ կորած ընտանիքի անդամ - Ռազմագերիներ - Ամուսնալուծություն - Ընտանիքի անդամի ծանր հիվանդություն - Բռնություն - Երեխայի որդեգրում - Ընտանիքի կյանքում այլ կարևոր իրադարձություն

5 Ընտանիքի կարիքների գնահատում	7 Այլ
- Սոցիալական պայմաններ (ֆինանսական վիճակ, կենցաղային պայմաններ և այլն) - Ընտանիքի անդամների ֆիզիկական առողջություն - Հոգեկան առողջություն - Սոցիալական աջակցություն (այլ մարդկանց և համայնքի կողմից ցուցաբերվող օգնություն) - Իրավաբանական աջակցություն	- Ընտանիքի պլաններ և նպատակներ - Ընտանիքի պոտենցիալ ռեսուրսներ, ուժեղ կողմեր
6 Ռիսկերի գնահատում	
- Կախվածություններ /ալկոհոլամոլություն, խաղամոլություն, թմրամոլություն/ - Հակասոցիալական, հակաօրինական գործունեություն - Ինքնասպանություն - Հետվնասվածքային սթրեսային խանգարում	

Վերոհիշյալ հարցերին անդրադառնալիս անհրաժեշտ է շեշտադրել ընտանիքի անդամներին ապրումակցելու և ակտիվ լսելու կարևորությունը՝ խուսափելով նրանց հարցաքննելուց կամ քննադատելուց: